ԱՆԷՍԹԵԶԻՈԼՈԳՆԵՐԻ և ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԵՎՏՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ARMENIAN SOCIETY OF ANAESTHESIOLOGISTS AND INTENSIVE CARE SPECIALISTS

ՀՀ, Երևան, 0087 Տիտոգրադյան 14
+37491490597 +14408158063

Titogradyan St. 14, Yerevan 0087, Armenia
armanesthesiology@gmail.com http://armanest.am

10 փետրվարի 2026 թ.

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարար
տ. Անահիտ Ավանեսյանին

Մեծարգո տ. նախարար,

Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միությունը ողջունում է առողջության համընդհանուր ապահովագրության ներդրումը հանրապետությունում՝ միանգամայն վստահ լինելով, այն կնպաստի բնակչության առողջապահական կարիքների բավարարմանը և կբարձրացնի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների հասանելիությունը: Վերջին օրերի ընթացքում հանրապետության տարբեր բուժհաստատություններում շրջանառվել է Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի կողմից մշակված «Արտահիվանդանոցային և հիվանդանոցային անվճար կամ համավճարային պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու ծառայությունների գների՝ անհրաժեշտության դեպքում ըստ բուժման օրերի արժեքների, ծախսերի կառուցվածքի և փոխհատուցման կարգի» վերաբերյալ փաստաթղթի նախագիծ, որն այնուհետև տարածվեց նաև որոշ սոցիալական հարթակներում՝ հարուցելով բազմաթիվ տարբեր մասնագիտության տեր բժիշկների և հատկապես անէսթեզիոլոգների դժգոհությունը: Այս փաստաթղթի կապակցությամբ մեր միությանն են դիմել բազմաթիվ անէսթեզիոլոգներ՝ հայտնելով իրենց մտահոգությունը և խնդրելով արձագանքել անէսթեզիոլոգների աշխատանքի վարձատրության նվազագույն չափաքանակների փոփոխության նպատակով:

Նշված փաստաթղթի ուսումնասիրության և համապատասխան քննարկումների նպատակով հրավիրվեց մեր միության խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցում էին նաև հանրապետությունում գործող բազմաթիվ անզգայացման ծառայությունների ղեկավարներ և ՀՀ ԱՆ անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի գծով նախկին և ներկա խորհրդատուները: Քննարկումների արդյունքում ձևավորված կարծիքը ներկայացնում եմ Ձեր ուշադրությանը՝ շեշտելով, որ այն համահունչ է հանրապետության անէսթեզիոլոգների ճնշող մեծամասնության, եթե ոչ բոլորի կարծիքի հետ:

Ամենևին նպատակ չունենալով որևէ կերպ նսեմացնել բժշկական ծառայությունների մատուցման գործում այլ մասնագետների դերը՝ կարծում ենք, որ անէսթեզիոլոգների աշխատանքը գնահատված է ոչ համապատասխան կերպով, իսկ ավելի հստակ՝ խիստ ցածր: Մեզ անհասկանալի է, թե ինչ մասնագետների կողմից է կազմվել նշված փաստաթուղթը, ինչ հաշվարկների հիման վրա են որոշվել վարձատրության նվազագույն չափաքանակները, և արդյոք եղել են խորհրդակցություններ անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների աշխատանքի առանձնահատկություններին ծանոթ համապատասխան մասնագետների հետ: Հաշվի առնելով անէսթեզիոլոգի աշխատանքի կարևորությունը՝ նման ցածր գնահատականը առաջացնում է խորը հիասթափություն, այն կարող է էլ ավելի խթանել հանրապետությունից մասնագետների վաղուց

արդեն գոյություն ունեցող արտագաղթը, ինչպես նաև կարող է հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի, որովհետև մեր խորին համոզմամբ դժվար թե որևէ բուժառու իր՝ բառի բուն իմաստով կյանքը վստահի մի մասնագետի, որը վիրահատության ընթացքում նրա կյանքի պահպանման համար ստանալու է նման ոչ արժանվույն չնչին վարձատրություն:

Չնայած ՀՀ ԱՆ ֆեյսբուկյան էջում տրված պարզաբանմանը այն մասին, որ առողջության համընդհանուր ապահովագրության ներդրման շրջանակում սահմանվել է փոխհատուցման նվազագույն չափաքանակ և բուժհաստատությունն ինքնուրույն է որոշում յուրաքանչյուր բժշկի աշխատավարձի չափը, ինչը քննարկվող փաստաթղթից ինքնին հասկանալի էր և լրացուցիչ պարզաբանման կարիք չուներ, այնուամենայնիվ մենք ավելի քան վստահ ենք, որ բուժհաստատությունների ճնշող մեծամասնությունը, եթե ոչ բոլորը, բժիշկների աշխատավարձը կսահմանեն արդեն որոշված նվազագույնի չափով:

Վերը նշված խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկում ենք քննարկել առողջության համընդհանուր ապահովագրության ներդրման շրջանակում անէսթեզիոլոգիական ծառայության աշխատանքի վարձատրության նվազագույն չափաքանակի՝ ծառայության արժեքից ձևավորվող աշխատավարձի ֆոնդի առնվազն 15%-ի սահմանման հնարավորությունը: Մեր կողմից առաջարկվող աշխատավարձի ֆոնդի չափը հիմնավորվում է նրանով, որ այն մոտավորապես համապատասխանում է ներկայումս հանրապետության անզգայացման ծառայություններին տրամադրվող իրական չափաբաժնին:

Մեր կարծիքով խիստ անհամապատասխան է նաև աշխատավարձի ֆոնդից բուժանձնակազմի վարձատրման տոկոսային հարաբերակցությունը ավագ, միջին և կրտսեր բուժանձնակազմերի միջև: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուժման հիմնական, այդ թվում նաև իրավաբանական պատասխանատվություն կրում է ավագ բուժանձնակազմը՝ առաջարկում ենք աշխատավարձի ֆոնդը ավագ և միջին բուժաշխատողների միջև բաշխել 80:20 տոկոսային հարաբերակցությամբ:

Ակնկալելով Ձեր դրական վերաբերմունքը ներկայացված առաջարկի վերաբերյալ՝ խնդրում ենք քննարկել և նպատակահարմար դիտվելու դեպքում հաստատել վերը նշված փոփոխությունը:

Հայտնում ենք մեր մշտական պատրաստակամությունը առողջապահության նախարարության հետ ակտիվ համագործակցելու նպատակով:

Միության բոլոր անդամների անունից
հարգանքով՝

Արմեն Վարոսյան, բ.գ.թ, դոցենտ, DEAA, FESAIC
Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության նախագահ